ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/100 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով մարզագույքի /ծանրաձողեր/ գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 09.09.2022թ. ժամը 14:30-ին Էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Գիլոյան
Հանձնաժողովի անդամ՝ Դավիթ Բաղումյան
Սուսաննա Ղազարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հերմինե Ալոյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	«Լայթսպորտ» ՍՊԸ
2	«Գլոբալ Սպորտ» ՍՊԸ

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

3.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Չ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները	Վերջնական Առաջարկված գինը, ՀՀ դրամ	
			Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	38088000	«Լայթսպորտ» ՍՊԸ	28716200	34459440
		«Գլոբալ Սպորտ» ՍՊԸ	29416200	35299440

4. **Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և ներկայացված փաստաթղթերի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանության մասին.**

4.1 «Լայթսպորտ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը:

5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

5.1 «Լայթսպորտ» ՍՊԸ-ի հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևաչափը չի համապատասխանում հրավերով սահմանված ձևաչափին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

5.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Լայթսպորտ» ՍՊԸ-ին շտկել 5.1 կետով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

5.3 Հանձնաժողովի նիստը կշարունակվի մասնակցի կողմից անհամապատասխանությունները շտկելուց հետո՝ 13.09.2022թ., ժամը 14:30-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 13.09.2022թ ժամը 14:30-ին

6. Արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

6.1 «Լայթսպորտ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են 5.1 կետով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

7. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

7.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել «Լայթսպորտ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել «Գլոբալ Սպորտ» ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8. Գնահատման արդյունքների մասին

8.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Կարեն Գիլոյան /նախագահ/

_____ Դավիթ Բաղումյան

_____ Սուսաննա Ղազարյան

_____ Հերմինե Ալոյան /քարտուղար/